

## ՀՀ Արմավիրի մարզի Կողբավան համայնքի ղեկավարի

### 2017 թվականի հաշվետվություն

24.01.2018թ.

2018 թվականի հունվարի 24-ին ժամը 14:00-ին Կողբավան համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի տարեկան հաշվետու ժողովը, որին մասնակցում էին մարզպետարանի ֆինանսական և սոցիալտնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ա. Մարտիրոսյանը, համայնքապետարանի աշխատակիցներ, ավագանու անդամներ և համայնքի բնակիչներ:

Ելույթի համար խոսքը տրվեց համայնքի ղեկավար Սերոբ Սերոբյանին:

Հարգելի ընկերներ, ավագանու անդամներ, հրավիրվածներ ես, Կողբավան համայնքի ղեկավարս, ներկայացնում եմ Ձեզ հաշվետվություն Կողբավան համայնքում 2017 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ինչպես գիտեք Կողբավան համայնքն ունի բազում հիմնախնդիրներ, որոնցից հատկապես կառանձնացնեի խմելու ջրի բացակայության հարցը: Գյուղը խմելու ջրով ապահովելու հարցով զբաղվելուն զուգընթաց կազմակերպվում է համայնքի միջոցներով ջրի մատակարարումը հարևան Երվանադաշատ համայնքից՝ շաբաթական երկու անգամ խմելու ջուր է բաժանվում համայնքի բնակչությանն անվճար հիմունքներով:

Համայնքն անելիքներ ունի նաև կրթության բնագավառում, քանի որ Կողբավանի դպրոցահասակ երեխաները սեփական համայնքում դպրոց հաճախելու հնարավորությունից զրկված են: Դպրոցահասակ երեխաներին հարևան Վանանդ համայնք, որտեղ կազմակերպվում է նրանց ուսուցումը, հասցնելու համար ևս հատկացված է ավտոմեքենա , որն առավոտյան տանում և դասերի ավարտից հետո ետ է բերում նրանց համայնք:

Համայնքում իրականացվել է կրծողների դեմ պայքարի միջոցառում, որին իրենց մասնակցությունն են ցուցաբերել բնակչության ակտիվ տարրերը : Թունաքիմիկատներ են տեղադրվել բնակավայրերից անհրաժեշտ հեռավորության վրա գտնվող վարելահողերի և այլ հողատեսքերի վրա՝ այդ մասին լայնորեն իրազեկելով ողջ բնակչությանը:

Համայնքի բնակչությունը պատրաստակամությամբ արձագանքեց վարչապետի Մաքուր Համայնք ծրագրի շրջանակներում իրականացվող հանձնարարականներին՝ 2 անգամ կազմակերպելով և անցկացնելով շաբաթօրյակներ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ցուցանիշների մասով .

Եկամուտների մասով պլանային առաջադրանքը կատարվել է 94,6 տոկոսով՝ պլանային 8485,0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 8024,8 հազար դրամ եկամուտ, որն էլ ձևավորվել է հետևյալ ուղղություններից.

ՀՈՂԻ ՀԱՐԿ – պլանային առաջադրանքը կատարվել է 98,96 տոկոսով՝ տարեկան 3000,0 հազար դրամի դիմաց 2968,8 հազար դրամ հավաքագրվելով:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ գծով պլանային առաջադրանքը կատարվել է 88,3 տոկոսով , 185,0 հազարի դիմաց հավաքագրելով 163,4 հազար դրամ:

Համայնքի սեփականություն համարվող հողերի ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ - պլանային 1600,0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 1182,6 հազար դրամ : Պլանային առաջադրանքը կատարվել է 73,9 տոկոսով:

Համայնքի սեփականություն համարվող գույքի օտարումից կատարվել է մուտք 190,0 հազար դրամի չափով, ինչպես նաև վարչական գանձում 10,0 հազարի չափով:

Մուտքեր ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ - 100 %-ով կատարվել է պլանային առաջադրանքը` 200,0 հազար դրամ:

Համայնքին տրվել է դոտացիա 3500,0 հազար դրամի չափով:

2017 թվականի ընթացքում կատարվել են ծախսեր հետևյալ կտրվածքով`

Աշխատավարձ` 6410,7 հազար դրամ:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցներին տրվել է դրամական խրախուսում 394,9 հազար դրամ:

Կատարվել է էլեներգիայի վարձավճար 46,0 հազար դրամի չափով:

Համակարգչային ծառայություններից օգտվելու համար ծախսվել է 24,0 հազար դրամ:

Գործուղման ծախսեր` 1,2 հազար դրամ:

Տրանսպորտային նյութերի ձեռք բերման համար ծախսվել է 499,2 հազար դրամ:

Գրենական պիտույքների ձեռք բերման համար կատարվել են ծախսեր` 50,0 հազարի չափով:

Տեղեկատվական ծախսերի համար հատկացվել է 48,0 հազար դրամ:

Կատարվել է նախորդ տարիների չօգտագործված գումարի ետվերադարձ` պարտադիր վճար 15,6 հազար դրամի չափով:

Համայնքի հիմնախնդիրներն են, ինչպես արդեն նշվեց.

1. Խմելու ջրի բացակայությունը
2. Կրթության բնագավառում` դպրոցաշինությունը
3. Գազաֆիկացումը

Համայնքի ղեկավար

Ս. Սերոբյան